ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՊՈՂՈՍ ՎԱՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՆԵՐԻՆ

Երուսաղեմի Հայոց պատրիարք Պողոս Վանեցու՝ 1772 թ. մայիսի 10-ին Արցախի մելիքներին ուղղած նամակի կրկնօրինակը գտնվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրատանը **3221** թվահամարի տակ պահվող *«Օրինակք պաշտօնագրոց»* ժողովածուի 113-115-րդ էջերում[1]: Ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Շնորհօք ամենազօրին Աստուծոյ ի ՌՄԺԸ. (1769) թուին, յուլիս ԻԷ. (27), ի պատրիարգութեան Սրբոյ Քաղաքիս Երուսաղէմի՝ տեառն Պօղոսի երջանիկ ռաբունապետի եւ արքեպիսկոպոսի Վանցւոյ, եղեւ սկիզբն գրութեան օրինակաց գրոցս, զի զբազմաց հարկաւորական գրելեաց յամենայն պէտս Սրբոյ Աթոռոյս՝ զօրինակս պարունակէ նիքեան, այսինքն՝ նուիրական կոնդակաց, հանդերձ անուամբք իւրաքանչիւրոց թէմից, քաղաքաց, դասապայից եւ գիւղից…»[2]:

Այս նամակով Երուսաղեմի Հայոց պատրիարքը նյութական աջակցություն է խնդրել Խամսայի մելիքներից, սակայն Արցախի պատմության ուսումնասիրության տեսանկյունից ոչ այնքան կարևոր է սույն վավերագրի բովանդակությունը, որքան նամակի առկայության բուն փաստը: Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում Արցախի մելիքությունները հայ իրականության մեջ մնացել էին առավել ազդեցիկ աշխարհիկ իշխանությունը, որոնց վրա էլ իր հայացքն էր ուղղել Երուսաղեմի Հայոց պատրիարքը[3]:

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

(113) Ի ՌՄԻԱ. (1772) ԹՈՒԻՆ ԵԻ Ի ՄԱՅԻՍԻ Ժ. (10).
ՍՂՆԱՂՈՒ ՄԵԼԻՔՆԵՐԻՆ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՄԵԼԻՔ ԵՍԱՅԻՆ, ՄԵԼԻՔ ԱԴԱՄԻՆ, ՄԵԼԻՔ ԻՍՈՒՖԻՆ, ՄԵԼԻՔ ՄԻՐԶԱԽԱՆԻՆ, ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻՆ. ՁԵՌԱՄԲ ՂԱԶԱՆՉԵՑԻ ՄԱՀՏԵՍԻ ՄԿՐՏՉԻՆ ԳՐԵՑԱՔ

Եւ ընդ Աստուածապարգև և շնորհաբաշխ օրհնութեանս ծանիցէ բարեպաշտութենէ Աստուածասէր իշխանիդ. զի գրէ սրբազան Առաքեալն Պողոս առ սիրելի աշակերտն իւր Տիմոթէոս, բացայայտելով զպատճառ մար-

---

[1] *Ն. արք. Պողարյանի կազմած ձեռագրացուցակում սույն պաշտոնագրերի ժողովածուն նկարագրված է այսպես. «Ծաւալ 36 x 24,5 x 3: Էջք 198: Հանգամանք՝ բաւարար, նորոգութիւն կրած: Թուղթ սպիտակ, թանձր: Գրութիւն՝ խորագիրները եւ սկզբնատառերը կարմիր, մնացեալը սեւ մելանով, միասիւն, 33 տող, կարմիր գիծերու միջեւ: Նոտր շեղագիր: Համառոտագրութիւնք առատ: Կաշեկազմ: Դատարկ թուղթ սկիզբը մէկ թերթ» (տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց՝ Ն. արք. Պողարեան, հ. 9, Երուսաղէմ, 1979, էջ 521):*

[2] *Նույն տեղում, էջ 521:*

[3] *Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Երուսաղեմի Հայոց պատրիարք տ. Թորգոմ արք. Մանուկյանին և նրա քարտուղար հ. Իսահակ Մինասյանին՝ մեր խնդրանքին ընդառաջելու և սույն վավերագրի լուսապատճենը մեզ տրամադրելու համար:*



Երուսաղեմի Հայոց պատրիարք Պողոս Վանեցու՝
Արցախի մելիքներին ուղղած նամակի առաջին էջ

դեղութեան Տեառն մերոյ,ասելով՝ Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս[*]: Եւ սուրբ Առաքեալն Պետրոս ասէ՝ Քրիստոսի չարչարիլն վասն մեր[**], և դուք ի նոյն միտս վառեցարուք, յորոց և յայլոց այսպիսեաց յոյժ բազում վկայութեանց Աստուածայնոց սուրբ գրոց յայտնապէս ուսանիմք, թէ որդւոյն յԱստուծոյ՝ որդի մարդոյ լինիլն վասն փրկութեան անկելոյ մարդկային բնութեանս եղև: Եւ այս ոչ վասն գործոց մերոց, այլ վասն իւրոյ ամենառատ մարդասիրութեանն, խոնարհեալ յիւր անհասանելի փառացն, զգեցաւ մարմին՝ ծնեալ ի կուսէն, մարդ եղև վասն փրկութեան մարդկան՝ անփոփոխելի գոլով ի յէութեան, որ և յանձն էառ զբազում նեղութիւնս և զվիշտս աշխարհի ի ստեղծուածոց իւրոց կամաւորապէս: Եւ ի վախճանի կատարման ամենայն տնօրէնութեանն, էհեղ զՊատուական և զԱստուածային Արիւնն իւր ի վերայ Քառաթն խաչին՝ բազում և անթիւ չարչարանօք, զորս մի ըստ միոջէ ոչ ոք կարէ ճառել, և մեռեալ մարմնով եղաւ ի գերեզմանի, յետ երից աւուրց աւերեալ զդժոխս, յարեաւ փառօք և համբարձաւ յերկինս, նստաւ ընդ աջմէ Հօր, յորմէ ոչ երբէք էր բաժանեալ, որ և գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս[***], որպէս ուսուցանեն մեզ Աստուածային գիրք:*

Եւ զայսոսիկ ո՛վ Աստուածասէր իշխան, ոչ այլ ինչ պատճառաւ արար, եթէ ոչ վասն փրկութեան մարդկան, որ գերի եղեալ էր բոլոր բնութիւն մարդկային ի ձեռն սատանայի, և ոչ յայլ ուրեք եցոյց զայս անճառելի մարդասիրութիւնս, եթէ ոչ ի յայս օրհնեալ Աւետեաց երկիրս և ի Սուրբ Քաղաքս Երուսաղէմ, որում ամենայն հաւատացեալ Քրիստոնեայք ցանկան և փափաքին, և որոք կարողանան, ոմանք զաշխատանս և զբազում ծախս ընչից յօժարաբար յանձն առնելով՝ գան յուխտ և յերկրպագութիւն սրբոց փրկագործ տնօրինական տեղեացս և առեալ զօրհնութիւն սոցին՝ մանաւանդ Սրբոյ Աստուածընկալ և լուսաբուղխ գերեզմանին Քրիստոսի Տեառն մերոյ, և խաղաղութեամբ դառնան իւրաքանչիւրք ի յերկիրս և ի բնակութիւնս իւրեանց և ոմանք զողորմութիւնս, զընծայս և զնուէրս, և կամ զհիշատակիս՝ արծաթեղէնս և ոսկեղէնս, և զայլ նմանս սոցին յղեն ի Սուրբ Քաղաքս, կամ ձեռամբ նուիրակաց (114) *և կամ ձեռամբ եկօղ ուխտաւորաց, որոց և իւրաքանչիւրոց օրհնութեան կոնդակ ուղարկեմք. և նոքա այնու զփափաքս սրտից իւրեանց լցուցանեն:*

Բայց ի մէջ այսքան բազմութեանց ուխտաւորաց՝ մեծատանց և աղքատաց, որք վասն սիրոյ Սուրբ Տեղեացս զաղքատութիւնս իւրեանց մոռացեալ՝ գան յերկրպագանել Սրբոյ Աստուածընկալ գերեզմանին Քրիստոսի Տեառն մերոյ. մինչ ի ձեր օրհնեալ երկրէդ ոչ ոք գտանի աստ, զի գոնէ ձեռամբ նորին օրհնութեան կոնդակ յղեսցուք Աստուածասիրութեան ձերում: Յոյժ ցաւիմ և ափսոսամ վասն սիրելեացդ իմոց, որք կարող գոլով, և ողորմութեամբն Աստուծոյ տօլվաթաւոր և առատաձեռն՝ ոչ հրամայէք և եկեալ զօրհնութիւն Սուրբ Տեղեացս վայելէք, և զօրհնեալ մահտեսական անունն՝ հանդերձ թողութեամբ մեղաց առեալ՝ վերադառնայք խաղաղութեամբ ի յօրհնեալ տունս և ի բնակութիւնս ձեր: Եւ մեք հոգևորապէս Հայր գոլով հասարակաց, որ զամենայն աշխատանս և զցաւս Սրբոյ Աթոռոյս ի փառս Քրիստոսի յոժարութեամբ յանձն առեալ կրեմք վասն այնորիկ, զի նախ նա ինքն զչարչարանս և զմահ կամաւորապէս յանձն էառ վասն մերոյ փրկութեան, անպարտ և անարատ գոլով ըստ ամենայնի, որոյ զկաթիլ մի ի քրտանցն ոչ արժէ բովանդակ չարչարանք

---

[*] *Ա. Տիմ. Ա. 15:*

[**] *Ա. Պետ. Դ. 1:*

[***] *Ա. Պետ. Դ. 5:*

աշխարհի, և զի, եթէ նա այնքան սիրեաց զանկեալ բնութիւնս մարդկան, մինչև զանձն իւր եդ ի վերայ նորա կամաւորապէս:

Մեծ ինչ իցէ, եթէ հաւատացեալքն զանցաւոր աշխարհիս ի նմանէ պարգևեալ ստացուածս ծախեալ ի փառս Անուան նորա, պատուեսցեն զՍուրբ Գերեզման իւր շնորհաբաշխ, որպէս և առնեն իսկ յամենայն կողմանց՝ դիմելով ի Սուրբ Երկիրս, վասն սիրոյ Սուրբ Տեղեացս: Եւ զայս ասեմ սիրելի ոչ այնքան մարմնաւոր օգտի - աղագաւ, որքան փրկութեան հոգւոց ձերոց, զի Աստուած, որ մինչև ցայժմ շէն և պայծառ պահեալ է զՍուրբ Աթոռս իւր, այսուհետև ևս կարող է պահել, այլ կամիմ, զի դուք սիրելիքդ մեր՝ գոլով հաւատացեալք Քրիստոսի և բարեպաշտք, մի՛ զրկեցիք ի շնորհաց Սուրբ Տեղեացս, զոր ամենայն հաւատացեալք վայելեն. թէպէտ և մարմնաւոր գոյիւք օգնական լինիլն Սրբոյ Տանս չիցէ պակաս բարեգործութիւն, որով աղքատ միաբանից մարմնաւոր ապրուստն հոգալով՝ հանապազ աղօթեսցեն վասն ամենայն հաւատացելոց՝ մանաւանդ ողորմութիւն տուողաց, զի լինիցի ձեր առաւելութիւնն ի նոցա նուազութեան, և նոցա առաւելութիւնն ի ձեր պակասութեան, որպէս Առաքեալն ասէ[*]:*

Եւ որովհետև ի բազում ժամանակաց հետէ ի յօրհնեալ երկրէդ ձերմէ կամ վասն անհանգստութեան, և կամ այլ ինչ պատճառաւ ուխտաւոր կամ ողորմութիւն չէ - եկեալ ի Սուրբ Քաղաքս յայսմ ամի, սիրելին մեր՝ ղազանչեցի մահտեսի Մկրտիչն, աստ հանդիպելով՝ ծանոյց մեզ զբարեպաշտութենէ սիրելւոյդ և զխաղաղութենէ երկրիդ, վասն որոյ յոյժ ուրախացաք, և գոհանալով խնդրեմք յԱստուծոյ, զի խաղաղութեամբ և միշտ սիրով պահեսցէ զձեզ, փրկելով յերևելի և յաներևոյթ թշնամեաց, և զօրացուսցէ զձեզ յաղթող լինիլ ընդդէմ հակառակորդաց հաւատոյ: Այլև (115) *գիտասցէ բարեպաշտութիւնդ, զի որ զբարիս գործէ՝ զհատուցումն գործոցն միայն ընդունի ի Տեառնէ, իսկ որ այլոց բարեաց ևս պատճառ լինի, կրկին վարձս ստանայ, ուստի խնդրեմք ի սիրելւոյդ, զի գոլով իշխող և մեծաւոր ի վերայ օրհնեալ նահանգիդ հաւատացելոցն, նախ դու՝ օրհնեալդ ի յԱստուծոյ, սկիզբն արասցես նորագոյն բարեգործութեան՝ զսէրդ առ Սուրբ Երուսաղէմս հաստատելով, և եթէ հրամայես ընդ քեզ և զայլ յորդորելով՝ գալ ի յուխտ և յերկրպագութիւն Սուրբ Տեղեացս յոյժ բարւոք առնես, ապա թէ այս պատճառաւ իւիք անկարելի լիցի վասն իշխանական կառավարութեանդ, կարող ես զայլս յորդորմամբ յղեալ, նաև ի հեռաստանէ օգնութիւն առնել Սրբոյ Տանս, զի ի մէջ բազում նեղութեան եմք, զոր մահտեսի Մկրտիչն կուպատմէ բարեպաշտութեանդ:*

Այլև յորժամ մեր նուիրակն տեղդ կուգայ, Աստուծոյ համար տիրութիւն առնես. կամ զայլ տօլվաթաւորսն ևս՝ յորդորելով օգնութիւն առնէք և զոր ինչ ողորմութիւն նուիրակին տայք, այնպէս կու համարիմք, թէ եկիք ուխտ արարիք. և միշտ աղօթող եմք վասն կենդանեացդ և ննջեցելոցդ ձերոց առ Տէր, զի զբազմապատիկ վարձս բարեաց պարգևեսցէ ձեզ աստ և ի հանդերձելումն, որ և սիրոյ գիրդ անպակաս առնելով. լեր ողջ, բաւ է:

---

[*] *Բ. Կորն. Ը. 14*